

ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման
և եվրասիատեգրման բաժնի ավագ դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԻՐԱՎԱԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ

Դատական հայեցողության անհրաժեշտության կամ բացառման, դրական և բացասական կողմերի քննարկումները հիմնականում վերաբերում են դատական հայեցողության սահմաններին և այն սահմանափակելու կառուցակարգերին: Ա. Բառակը նշում է, որ ժողովրդավարական իրավական համակարգում անսահմանափակ հայեցողությունը ոչ թե օրենքին հակասող երևույթ է, այլ այն պարզապես գոյություն չունի: Եթե նույնիսկ օրենքում ամրագրված լինի անսահմանափակ հայեցողություն, ապա այն պետք է մեկնաբանվի որպես սահմանափակ, քանի որ յուրաքանչյուր պետական մարմին պետք է առաջնորդվի իր առջև դրված խնդիրներով և իրավական համակարգի հիմնարար արժեքներով: Անսահմանափակ հայեցողությունը մարդու ազատությունը սահմանափակող ամենավտանգավոր երևույթներից է¹:

Դատական հայեցողությունը, հանդիսանալով ռիսկային, իսկ առանձին դեպքերում նաև չնորմավորված գործունեություն, գործնականում հեշտությամբ փոխում է որակական հարթությունը՝ վերածելով կամայականության: Ցանկացած գաղափարախոսական դիրքորոշման տեսանկյունից հանրային իշխանության մարմինների՝ իրավունքով չսահմանափակված լայն հայեցողությունը որակվում է սոցիալապես անցանկալի իրավիճակ, որը կարելի է բնութագրել «կամայական» եզրույթով²:

Դատական հայեցողության՝ որպես իրավական երևույթի ճանաչումը, դրա սահմանների ընդհանուր ուրվագծումը կախված է նաև տվյալ իրավական համակարգում գերակայող իրավաբանական կոնկրետ հայեցակարգը³: Իրավախախտումը համարվում է իրավական համակարգի հիմնարար տարրերից, որն ազդում է իրավական համակարգի մյուս օղակների վրա՝ իրավաստեղծ գործունեության, իրավունքի աղբյուրների համակարգի, իրավակիրառման, իրավական մտածողության

և այլն: Այս ամենը վկայում է, որ իրավաբանական հանդիսանում է իրավական համակարգերի տիպականացման իրավափիլիսոփայական չափանիշներից: Ուստի փորձենք դատական հայեցողության ընդհանուր սահմանները ներկայացնել ըստ իրավական համակարգերում գերիշխող իրավաբանական հայեցակարգերի:

Անգլոսաքսոնական իրավական համակարգում գերիշխում է առավելապես իրավաբանական սոցիոլոգիական ուղղվածությունը: Նշված իրավաբանական կողմնակիցներն ընդունում են դատական հայեցողության փաստը և դատարանների՝ իրավունք ստեղծելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ ընդհանուր իրավունքի երկրներում գոյություն ունեցող դեկլարատորային ուսմունքի տեսանկյունից մերժվում է դատական հայեցողության շրջանակներում իրավունքի նորմեր ստեղծելու դատավորի իրավասությունը այն պատճառաբանությամբ, որ դատավորը կիրառում է արդեն իսկ գոյություն ունեցող իրավունքը⁴: Բոլոր դեպքերում, քննարկվող իրավական համակարգում գերիշխող իրավաբանական կողմնակիցները դատական հայեցողությունն ընդունում են որպես իրավաստեղծ գործունեության միջոց: Դատական իրավաստեղծ գործունեությունը դատարանի՝ գործն իր հայեցողությամբ, անկախ օրենքից, երբեմն նույնիսկ դրան հակառակ լուծելու իրավունքն է: Անգլոսաքսոնական համակարգում գործում է՝ «իրավունքն այնտեղ է, որտեղ առկա է պաշտպանություն» սկզբունքը: Այս իրավաբանական պայմաններում դատական հայեցողության շրջանակներն ավելի լայն են, դատարանները օժտված են իրավաստեղծ գործունեության լայն հնարավորությամբ:

Ռոմանագերմանական իրավական համակարգը զարգացել է առավելապես իրավաբանական պոզիտիվիզմի և բնական իրավունքի իրավաբանական կառուցման ներքո: Զննարկվող

իրավական համակարգում իրավաբանական պոզիտիվիզմի համաձայն՝ դատական իշխանության գործառույթը սահմանափակվում է պարզ իրավակիրառմամբ, իրավական գործերի լուծման դատական փորձի կուտակմամբ: Նման իրավիճակում դատական իշխանությունը կարծես ստորադաս դիրք է զբաղեցնում օրենսդիր և գործադիր իշխանության նկատմամբ և ստիպված է հետևել օրենսդիր կամ գործադիր մարմնի կամքին: Այս համակարգում գործում է հետևյալ սկզբունքը՝ «իրավունքն այնտեղ է, որտեղ առկա է օրենք»⁵: Նշված իրավաբանական պայմաններում դատական հայեցողության շրջանակը սահմանափակված է օրենքով:

Իրավաբանական դիտակետից դատական հայեցողության սահմանափակման հարցերի քննարկումը վերաբերում է նաև *practer legem* և *contra legem* (օրենքից դուրս) իրավակիրառմանը: Պոզիտիվիստական իրավաբանական տեսանկյունից ընդունելի է *practer legem* իրավակիրառումը, որի դեպքում իրավական խնդրի լուծումը թեև օրենքով ուղղակիորեն կարգավորված չէ, սակայն այն չի հակասում օրենքին և ինքնին անօրինական չէ: *Practer legem* իրավակիրառումը գործում է այն ժամանակ, երբ դատարանը կոչված է լրացնելու օրենքի բացը և, ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից, օրենքը տեղայնացնում է այդ պայմաններին: Փաստորեն, այս դեպքում խոսք է գնում դատարանի կողմից օրենսդրի կամքի վերհանման և մեկնաբանման մասին, որի դեպքում սահմանափակվում է դատարանի իրավաստեղծ գործունեության հնարավորությունը, իսկ օրենսդրի կամքը դատական իշխանության համար ձեռք է բերում բացարձակ նշանակություն:

Բնական իրավունքի և ազատական իրավաբանական տեսության կողմնակիցները նշում են, որ իրավաբանական պոզիտիվիզմին հատուկ է իրավական նորմի բովանդակության նկատմամբ ոչ քննադատական մոտեցում, իրավական նորմը դիտվում է որպես դոգմա, որը ճշմարիտ է, քանի դեռ գործում է: Վ. Ներսիսյանցը նշում է, որ պոզիտիվիզմը «ավտորիտարիզմի նորմատիվ արտահայտությունն» է⁷:

Իրավաբանական իրավաբանական տեսանկյունից թույլատրելի է *contra legem* իրավակիրառումը, որի դեպքում իրավակիրառողը հնարավորություն ունի կայացնել ձևական-իրավաբանական տեսանկյունից ակնհայտ անօրինական, սակայն արդարությունից կամ նպատակահարմարու-

թյունից բխող որոշում: Այսպես, ազատական իրավաբանական տեսության համաձայն՝ օրենքները լինում են իրավական և ոչ իրավական: Իրավական են այն օրենքները, որոնք համապատասխանում են իրավունքին, այսինքն՝ բխում են ձևական հավասարության գաղափարից: Եթե օրենքները չեն համապատասխանում իրավունքին, ապա դրանք ոչ իրավական օրենքներ են և չեն կարող հանդիսանալ հասարակական հարաբերությունների կարգավորիչ: *Contra legem* տեսակի իրավակիրառման ծայրահեղական դրսևորումը մարդուն տրված հնարավորությունն է՝ չկատարել, իր պատկերացմամբ, իրավական որոշակի սկզբունքներին հակասող օրենքների պահանջները: Կանխավ նշենք, որ մասնավոր սուբյեկտների *contra legem* վարքագծի դեպքում, եթե անձը գտնում է, որ այս կամ այն օրենքը հակասում է իրավական սկզբունքներին, ոչ թե հրաժարվի կատարել օրենքի պահանջները, այլ օգտագործի օրենսդրական դրույթներն անվավեր ճանաչելու համար նախատեսված իրավական ընթացակարգեր, օրինակ՝ դիմի «**հասարակական օրգանիզմի իմունային համակարգի առանցքային օղակի միջուկը**»⁸ համարվող սահմանադրական դատարան՝ խնդրելով տվյալ օրենքը ճանաչել հակասահմանադրական:

Պոզիտիվիստական իրավաբանական կողմնակիցներն անթույլատրելի են համարում *contra legem* իրավակիրառումը, քանի որ նման իրավակիրառումը փաստացի հանգեցնում է դատարանների իրավաստեղծ գործունեությանը, իրավակիրառ պրակտիկայի հակասականությանը, որոշումների սուբյեկտիվությանը, ազատ հայեցողության ընդարձակմանը և կամայականություն դրսևորելու վտանգին: Վ. Կուրդյավցևը նշում է. «Վտանգը կայանում է նրանում, որ «ճշմարիտ իրավունքի» դրոշի ներքո օրենքը կարհամարհեն նրանք, ում իրավակարգը և օրինականությունը, ժողովրդավարությունը և մարդասիրությունը խանգարում է: Պրոֆեսիոնալ իրավաբանը պետք է ունենա հստակ և որոշակի դիրքորոշում, ոչ մի ցանկություն, համոզմունք կամ կարծիք չեն կարող դիտվել որպես իրավական նորմեր, քանի դեռ արտացոլված չեն պատշաճ կարգով ընդունված իրավաբանական ակտերում»⁹:

Կարծում ենք՝ իրավակիրառման քննարկվող տեսակների հավասարակշռված գույակցման պայմաններում է հնարավոր դատական հայեցողության սահմանների իրավական ողջամտության, կանխատեսելիության և միասնականության ապա-

հովումը: ՀՀ-ում դատական *praeter legem* իրավա-
կիրառման առկայությունը կարծես ոչ ոքի մոտ
կասկածի տեղիք չի տալիս, քանի որ դատարանը
իրավական բացի պայմաններում պարտավոր է
իրավունքի սկզբունքների սահմաններում և դրանց
հիման վրա իրականացնել իր սահմանադրական
գործառնությունները:

Ինչ վերաբերում է *contra legem* իրավակիր-
առմանը, ապա այս դեպքում հիմնական խնդիրն
այն է, որ հակասության մեջ են մտնում երկու իրա-
վական արժեքներ. մի կողմից՝ իրավական կարգա-
վորման ճկունությունը, մյուս կողմից՝ իրավունքի
կանխատեսելիությունը և որոշակիությունը: Բանն
այն է, որ արդարության և նպատակահարմարու-
թյան վերաբերյալ պատկերացումները խիստ գնա-
հատողական են և տարբեր կերպ են ընկալվում:
Բացի այդ՝ անսահմանափակ *contra legem* իրավա-
կիրառման դեպքում կարող է ծագել իրավական
նորմերի կիրառման միասնականության խնդիր:
Այսպես, դատավորների մի խումբը հոգեբանական
տեսանկյունից հակված է կայացնել ձևական
առումով օրինական որոշումներ, նույնիսկ եթե կիր-
առման ենթակա նորմերն ակնհայտ անարդար
են, իսկ դատավորների մեկ այլ խումբը հակված է
կայացնելու թեկուզ և անօրինական, սակայն ար-
դարացի որոշումներ:

ՀՀ-ում հանդիպում են *contra legem* իրավա-
կիրառման դեպքեր: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի
185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական
գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ
հիմքերի բացակայության դեպքում դատախազը,
քննիչը, հետաքննության մարմինը որոշում են
կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու
մասին: Մերժման որոշման պատճենը ուղարկվում
է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկա-
կան կամ իրավաբանական անձին: Նշված հոդվա-
ծով նախատեսված է քրեական գործի հարուցումը
մերժելու մասին որոշումը դատախազին և դատա-
րան բողոքարկելու հնարավորություն: Մինչդեռ ՀՀ
քր. դատ. օր-ի 185-րդ հոդվածում սահմանվում է, որ
քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշ-
ման պատճենը տրամադրվում է միայն հանցագոր-
ծություն մասին հաղորդում ներկայացրած անձին,
իսկ դա նշանակում է, որ օրենքն անուղղակի արգե-
լում է բողոքարկման ենթակա դատավարական
փաստաթղթի տրամադրումը այն անձին, ում գոր-
ծողությունների վերաբերյալ նյութեր են նախա-
պատրաստվել կամ հանցագործության զոհին, ով
չի համարվել հաղորդում ներկայացրած անձ: Իրա-

վակիրառ պրակտիկայում քննիչները և դատա-
խազները, շահագրգիռ անձանց դիմումի առկայու-
թյան դեպքում, որպես կանոն, տրամադրում են
որոշման պատճենը: ՀՀ քր. դատ. օր-ը, չնախատե-
սելով քրեական գործի հարուցումը մերժելու դեպ-
քում նյութերի ծանոթացման և դրանցից պատճե-
ներ հանելու դատավարական կարգ, նույնպես
անուղղակի արգելում է նաև մերժված նյութերի
տրամադրումը շահագրգիռ անձանց: Հաշվի առնե-
լով, որ առանց մերժված նյութերին ծանոթանալու,
քրեական դատավարության մասնակիցների՝ գոր-
ծի հարուցումը մերժելու մասին որոշման բողո-
քարկման իրավունքը իրական չէ, իրավակիրառ
պրակտիկայում հաճախ դատախազները, դիմումի
առկայության դեպքում, թույլատրում են դատավա-
րության մասնակցին ծանոթանալ նաև մերժված
նյութերին:

Նշված դեպքերում քննիչները և դատա-
խազները, շահագրգիռ անձանց տրամադրելով
քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշ-
ման պատճենը և թույլատրելով ծանոթանալ
մերժված նյութերին, փաստացի իրականացնում են
contra legem իրավակիրառում:

ՀՀ իրավական համակարգում առկա են
նաև դատական *contra legem* իրավակիրառման չա-
փավոր դրսևորումներ՝ կապված դատական նոր-
մավերահսկողության գործառնության և նորմերի՝ աբ-
սուրդի հասնող մեկնաբանման և կիրառման ան-
թույլատրելիության սկզբունքի հետ:

Contra legem իրավակիրառումը, դատարա-
նի նորմավերահսկողության գործառնության շրջա-
նակներում, արտահայտվում է.

վարչական արդարադատություն իրակա-
նացնելիս դատարանն իրավասու է վարչական վե-
ճը լուծել ենթաօրենսդրական ակտերի պահանջնե-
րին հակառակ, եթե գտնում է, որ այդ ակտերը հա-
կասում են օրենքներին,

դատարանը իրավասու է օրենքի սահմա-
նադրականության հարցով դիմել սահմանադրա-
կան դատարան, իսկ վերջինս էլ կարող է հակա-
սահմանադրական ճանաչել օրենսդիր մարմնի ըն-
դունած ակտերը:

Դատական նորմավերահսկողությունը ոչ
այլ ինչ է, քան դատական *contra legem* իրավակիր-
առում, քանի որ դատարանին հնարավորություն է
տրվում վեճը լուծել այս կամ այն օրենսդրական
պահանջներին հակառակ: Այս դեպքում դատա-
կան *contra legem* իրավակիրառման չափավորու-
թյունը պայմանավորված է դատարանի կողմից

օրենսդրական դրույթը չկիրառելու կամ այն անվավեր ճանաչելու դեպքում դրա կոլիզիոն իրավական հիմնավորումը և պատճառաբանությունը ներկայացնելու պահանջով:

Դատական *contra legem* իրավակիրառումն իր գոյության իրավունքն է ստանում նաև այնպիսի նորմատիվ իրավական ակտեր կիրառելիս, որոնք կարող են հանգեցնել արտուրդի: Իրավունքի տեսության մեջ հանրաճանաչ է իրավական նորմերի՝ արտուրդի հասնող մեկնաբանման և կիրառման անթույլատրելիության մասին մոտեցումը, որի համաձայն՝ դատարանը չպետք է ղեկավարվի այնպիսի իրավական նորմերով, որոնց կիրառումը կհանգեցնի արտուրդի: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 284-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի սահմանափակումն նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկվել է նշված նորմի՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել» դրույթի սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանը 23.11.2010թ. ՍԳՈ-926 որոշման պատճառաբանական մասում թեև նկարագրել է «բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել» դրույթի հակասահմանադրականությունը, սակայն որոշման եզրափակիչ մասում ՀՀ քր. դատ. օր-ի 284-րդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ ճանաչել է հակասահմանադրական: Եթե այլ դատարանները ղեկավարվեն ՀՀ սահմանադրական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտ համարվող որոշման եզրափակիչ մասի տառացի պահանջով, ապա պետք է մերժեն հեռախոսային խոսակցություններ-

րի սահմանադրական իրավունքի սահմանափակման վերաբերյալ օպերատիվ-հետախուզական մարմինների բոլոր միջնորդությունները: Մինչդեռ, գործնականում դատարանները քննարկում են նման միջնորդությունները, քանի որ հակառակ մոտեցումը կհանգեցնի արտուրդի և չի բխի ՀՀ սահմանադրական դատարանի քննարկվող որոշման պատճառաբանական մասից:

Մեկ այլ օրինակ. ՀՀ քր. դատ. օր-ի 313-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ դատական որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ առանձին փաստաթղթերի ձևով, կամ տեղում **դատավորների խորհրդակցելուց (ընդգծումը- Ղ.Ա.)** հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ: Առաջին ատյանի դատարանում քրեական գործերը քննվում են միանձնյա և գործնականում դատարանները չեն կատարում դատավորների խորհրդակցելու օրենսդրական պահանջը, քանի որ դրա տառացի ընկալումը հանգեցնում է արտուրդի:

*Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ իրավական համակարգում գերիշխող իրավաբանական ուղղակի ազդեցություն ունի դատական հայեցողության ընդհանուր սահմանների ուրվագծման համար: Պոզիտիվիստական և իրավաբանական իրավաբանական հայեցակարգերում գործող իրավակիրառման *praeter legem* և *contra legem* հավասարակշռված գույակցման պայմաններում հնարավոր է դատական հայեցողության սահմանների իրավական ողջամտության, կանխատեսելիության և միասնականության ապահովումը: Դատական *praeter legem* իրավակիրառումը դրսևորվում է դատարանի կողմից, իրավունքի սկզբունքների սահմաններում և դրանց հիման վրա իրավական բացերի լրացման ձևով, իսկ դատական *contra legem* իրավակիրառման չափավոր դրսևորումները կապված են դատական նորմավերահսկողության գործառույթի և արտուրդի հասնող նորմերի կիրառման անթույլատրելիության սկզբունքի հետ:*

¹ Տե՛ս Барак А. Судейское усмотрение. Перевод с англ. М.: Изд. НОРМА, 1999. С. 28-30.

² Տե՛ս Դատական կամայականության դեպքերի մասին տես Գամբարյան Ա. Դատական հայեցողության սահմանները պետական իշխանության սահմանափակման սկզբունքի խորապատկերում: Օրինականություն, թիվ 65, 2011.

³ Տե՛ս Байтин М. И. О современном нормативном понимании права. Ежегодник российского права. М.: Изд. «НОРМА», 2000. С. 215; Байтин М. И. Сущность права. Современное нормативное правопонимание на грани двух веков. Саратов, 2005. С.416; Лейст О.Э. Сущность права. Проблемы теории и философии права. М.: 2002;

Филиппова И.С. Позитивистская интерпретация теории правового государства: право как институт имплицитного ограничения государственной власти. Вестник Российской правовой академии, N2, 2007. С. 24-28; Арутюнян Г. Правовая глобализация и некоторые тенденции развития конституционализма. *Օրենք և իրականություն*, թիվ 17-18, 2003, էջ 41:

⁴ Տե՛ս Բерг Л. Н. Судебное усмотрение и его пределы (общетеоретический аспект). Автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2008. С. 7; Богдановская И.Ю. Судебный прецедент-источник права? Государство и право. 2002. N12. С. 6.

⁵ Տե՛ս Черкасова Е.В. Роль понимания права в формировании прецедентной практики: теоретико-правовое исследование. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2006. <http://www.law.edu.ru/book/book.asp?bookID=1291745> (02.02.2011).

⁶ Տե՛ս Филиппова И. С. Концепции ограничения государственной власти: теоретико-правовое исследование. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Н. Новгород, 2006. С. 11.

⁷ Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М.: Изд. НОРМА-ИНФРА•М, 1999. С. 36.

⁸ Տե՛ս Հարությունյան Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները. Եր.: Նժուր. 2003, էջ 60:

⁹ Տե՛ս Այս մասին մանրամասն տես Федотов А. Возможно ли применение contra legem в демократическом правовом государстве? Журнал российского права. 2002. N8. С. 92-98:

¹⁰ Տե՛ս Кудрявцев В.Н. О правопонимании и законности. Государство и право. N3, 1994. С. 5.

РЕЗЮМЕ

Влияние концепций правопонимания на границы судебного усмотрения

В статье автор представляет общие право-философские основания ограничения судебного усмотрения. Автор считает, что правопонимание, преобладающее в правовой системе, имеет непосредственное влияние на начертание общих границ судебного усмотрения. Сбалансированное сочетание правоприменения *praeter legem* и правоприменения *contra legem*, действующих в рамках концепций позитивистского и юридического правопонимания, способствует обеспечению правовой разумности, предусмотрительности и единства границ судебного усмотрения. Судебное правоприменение *praeter legem* проявляется посредством восполнения правовых пробелов судом, в пределах принципов права и на их основании. Умеренные же проявления судебного *contra legem* правоприменения связаны с функцией судебного нормконтроля, а также с принципом недопустимости применения абсурдных норм.

SUMMARY

The Influence of Legal Comprehension Concepts on Borders of the Judicial Discretion

In article the author represents the general right-philosophical bases of restriction of the judicial discretion. The author considers that the legal comprehension, prevailing in legal system, has direct influence on a tracing of the general borders of the judicial discretion. The balanced combination of legal comprehension *praeter legem* and the legal comprehension *contra legem*, operating within the limits of concepts positivistic and legal comprehension promotes maintenance of a legal rationality, foresight and the borders of the judicial discretion. Judicial legal comprehension *praeter legem* is shown by means of completion of legal blanks by court, within principles of the right and on their basis. Moderate displays judicial *contra legem* legal comprehension are connected with function of judicial normcontrol and also with a principle of inadmissibility of application of absurd norms.